# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**1.Անուն Ազգանուն**

Սերգեյ Խաչատրյան

**2. Զբաղեցրած պաշտոնը**

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ

**3. Գործուղման վայրը և ժամկետները**

Արգենտինայի Հանրապետություն, Բուենոս Այրես, 2017 թ. մայիսի 31-ից հունիսի 2-ը

**4. Հրավիրող կողմը**

Հայ բժիշկների միջազգային կոմիտե (AMIC)

**5. Գործուղման նպատակը**

Մասնակցություն հայ բժիշկների համաշխարհային 12-րդ համաժողովին

**6. Քննարկված թեմաները**

Համաժողովին քննարկվեցին աշխարհասփյուռ հայ բժիշկների կապը և համագործակցությունը, բժշկագիտական, գործնական բժշկության, բժշկական ապահովագրման, ինչպես նաև առողջապահության ֆինանսավորման կարևորագույն հարցերը, առողջապահության ժամանակակից խնդիրների առումով կուտակված փորձի և գիտական նվաճումների փոխանակման հարցերը: Համաժողովի նպատակներից էր նաև ապահովել կլինիկական պրակտիկայի հարցերի շուրջ քննարկման և բանավեճի հարթակ՝ այդ ամենը ի նպաստ դնելով Մայր հայրենիքում և Արցախում բժշկական օգնության որակական բարելավմանը:

Հայ բժիշկների 12-րդ միջազգային համագումարը, մասնագիտական քննարկումներից բացի, աշխարհի առաջատար հայ բժիշկների համար լավ հնարավորություն է միմյանց հանդիպելու, նոր ծանոթություններ ստեղծելու, փորձով կիսվելու, Հայաստանի առողջապահության համակարգի հետագա զարգացմանը միտված համատեղ ծրագրեր նախանշելու համար:

**7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Համաժողովին մասնակցում էր շուրջ 600 պատվիրակ բազմաթիվ երկրներից, այդ թվում աշխարհահռչակ հայ բժիշկներ, առողջապահության կազմակերպիչներ:

Համաժողովի բացման արարողության ժամանակ հանդես եմ եկել ելույթով: Ողջունելով մասնակիցներին նշեցի, որ արդեն ձևավորվել է համահայկական բժշկական ավանդույթ, որը մեծ ազդեցություն է թողնում ինչպես սփյուռքում աշխատող, այնպես էլ Հայաստանում աշխատող մասնագետների գործունեության վրա, նաև առանձնակի տեղ հատկացնելով այն հանրային առողջապահական ծրագրերին, որոնք համատեղ են իրականացվում: Նշվեց նաև ներկա պայմաններում Հայաստանի և սփյուռքի միասնական ջանքերի շնորհիվ նոր զարգացումների հասնելու անհրաժեշտությունը, հրավիրելով մասնագետներին ավելի ակտիվ մասնակցություն ունենալու ՀՀ առողջապահական համակարգի նոր փուլի բարեփոխումներին:

Կոնգրեսի բացումից հետո տեղի ունեցավ առաջին պլենար նիստը, որի ժամանակ մանրամասն ներկայացրել եմ այսօր Հայաստանում իրականացվող բարեխոխումների նպատակները առանձնացնելով այն մարտահրավերները, որոնց առճակատվել ենք և այն ուղիները, որոնց միջոցով նախատեսվում է հասնել հնարավորին արագ դրական արդյունքների: Ներկայացման ժամանակ բազմաթիվ հարցեր են հնչեցվել:

Նույն պլենար նիստի ժամանակ, Երևանի Մ.Հերացու անվան Պետական բժշկական համալսարանի ներկայացուցիչների կոնգրեսում ներկա գտնվելու անհնարինության պատճառով, ներկայացրել եմ Հայաստանում բժշկական կրթության, մասնավորապես Երևանի բժշկական համալսարանի կրթական ծրագրերը, հատուկ ուշադրություն դարձնելով այն հանգամանքին, որ ներկաներից շատերը ներկայացնում են աշխարհի ամենահայտնի և ճանաչված կրթական հաստատություններ:

Երկու ելույթներն էլ մեծ արձագանք գտան ներկաների մոտ, ինչի մասին վկայում էին տասնյակից ավել առանձին հանդիպում-քննարկումները ելույթներում բարձրացված հարցերի վերաբերյալ:

Հաջորդ օրերի ընթացքում առանձին ելույթով ներկայացրել եմ Հայաստանում դեղագործական ինդուստրիայի հետագա զարգացման հեռանկարները, դեղերի շրջանառության կարգավորման և դրանցից բխող այն նոր հնարավորությունները, որ կարող են ունենալ դեղագործական ընկերությունները՝ Հայաստանում ծավալելով իրենց արտադրությունները:

Առանձին ելույթով հանդես եմ եկել նաև մանկաբարձության և գինեկոլոգիայի հարցերին վերաբերվող պլենար նիստում, ներակայացնելով Հայաստանի դեմոգրաֆիկ աճի առողջապահության մասով խնդիրները, ինչպես նաև այն ներդրումների ծավալները և ուղղությունները, որոնք զգալիորեն կփոխեն մատուցվող ծառայությունների որակը, բերելով ծնվող երեխաների աճի, ինչպես նաև զգալիորեն նվազեցնելով մանկական և մայրական մահացության ցուցանիշները Հայաստանում:

Ելույթներիս ընթացքում շեշտել եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունը ողջունում և ակնկալում է համասփյուռ հայության ակտիվ մասնակցությունը իրականացվող բարեփոխումներում՝ հորդորելով ներդրումներ կատարել Հայաստանի առողջապահության համակարգում:

Համաժողովին ելույթ են ունեցել նաև ՀՀ առողջապահության նախարության և Հայաստանի առողջապահական համակարգի այլ ներկայացուցիչներ՝ յուրաքանչյուրը ներկայացնելով իր ոլորտում իրականացվող ծրագրերը:

## 8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Համագումարի հարթակներում ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչները էնդոսկոպիստների Պանամերիկյան ասոցիացիայի ընտրված նախագահ Ասադուր Չեքմեջյանի հետ քննարկել են լատինամերիկյան երկրներում՝ մասնավորապես Ուրուգվայի Հանրապետությունում իրականացվող կոլոռեկտալ քաղցկեղի կանխարգելմանն ուղղված սկրինինգային ծրագրի առանձնահատկությունները, դրանց ծախսարդյունավետությունը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել ուսումնասիրել Հայաստանում նմանատիպ ծրագրի իրականացման հնարավորությունը, առողջապահական, սոցիալական և տնտեսական օգուտի հաշվարկի մեթոդաբանության ներդրումը, ինչպես նաև

հնարավոր ծրագրի իրականացման համար միջազգային դոնոր կազմակերպություններ ներգրավելու հեռանկարները:
Կոնգրեսին ակտիվ մասնակցության համար ինձ շնորհվեց պատվոգիր:

**9. Առաջարկությունները**

Կոնգրեսի վերջին պլենար նիստերից մեկը կազմակերպվել էր՝ ելնելով AMIC-ի աշխատանքները վերաիմաստավորելու առկա պահանջից, դրանց տալով ավելի պրակտիկ և ամենօրյա բնույթ: Նիստին բոլոր հարցերը ուղղված էին առողջապահության նախարարության ներկայացուցիչներին, հասկանալու համար այն պահանջարկը, որ վերջինս ունի իր առօրյա խնդիրները և ռազմավարական մարտահրավերները լուծելու համար: Տեղի ունեցավ շահագրգիռ քննարկում, ճշգրտվեցին ՀՀ առողջապահության նախարարության և AMIC-ի հետագա անելիքները:

**10. Գործուղվողները**

Սերգեյ Խաչատրյան

Դավիթ Մելիք-Նուբարյան

**11.Ստորագրությունը, ամսաթիվը**

07 հունիս 2017 թ.